

Հայ գրականության մարզային փուլ - 2022 թ.

Հարցաշարերի պատասխանները - 10-րդ դասարան

1. Ոսկեդարը մեր գրի ու գրականության, դպրության, մշակույթի անբեկանելի գագաթներից է. գրի գյուտը, Աստվածաշնչի անթերի թարգմանությունը, գիտական, ուսումնական գրքերի թարգմանությունը, սրբախոսական ինքնուրույն գրականության, վարքագրության, պատմագրության, փիլիսոփայության սկզբնավորումը այս ճշմարտության հավաստումն են: 5-րդ դարի ամենախոշոր դեմքերից է պատմիչ Ագաթանգեղոսը, ում Պատմությունը կամ Ագաթանգեղոսի պատմությունը, հիրավի, մեր գրականության փառքերից է: Ագաթանգեղոս-Ավետաբերի՝ իր մասին թողած տեղեկություններից իմանում ենք, որ նա Հռոմ քաղաքից է, կրթված հայրենի գիտությամբ, սովորել է լատիներեն(հռոմայերեն),ու հունարեն և ոչ խիստ անտեղյակ է նշանագրերի արվեստին: Եվ հրաման է ստացել Տրդատ Մեծ արքայից՝ կարգով գրի առնել ժամանակների դեպքերը: Նրա Պատմությունը ներկայացնում է քրիստոնեության մուտքն ու հաղթարշավը, Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը, այդ իսկ պատճառով նախապես կոչվել է«Գիրք Սուրբ Գրիգորիսի»: Ագաթանգեղոսի Պատմությունը բաղկացած է«Առաջաբան»-ից և չորս գլուխներիվ՝ «Սուրբ Գրիգորի վարքը և պատմությունը», «Հռիփսիմյանների պատմությունը»,«Սուրբ Գրիգորի վարդապետությունը»,«Հայաստան աշխարհիս փրկության դարձը»: Պարթև նահապետ Անակի որդի Գրիգորը, որ փրկվել էր հայոց Խոսրով թագավորի կոտորածից, Կեսարիայում «դաստիարակվեց Քրիստոսի երկյուղով, և նա ուսանելով քրիստոնեական դպրության հանգամանքները՝ ընտելացավ Աստվածաշնչին, ճանաչեց Տիրոջ երկյուղը »,իմանալով իր հոր՝ Անակի կատարած ոճրագործության մասին, գալիս է Հայաստան և, թաքցնելով իր անձը, ծառայության անցնում Խոսրովի որդի Տրդատի արքունիքում: Տրդատն զգում է, որ Գրիգորը «հաղորդակից է քրիստոնեական պաշտամունքին» և ամեն կերպ ցանկանում է վերացնել դա: Գահակալության առաջին տարում Եկեղյաց գավառի Երիզա ամրոցում Տրդատը հրամայում է Գրիգորին, որ «պսակներ ու ծառերի թավ ճյուղեր նվիրաբերի Անահիտի արձանի բազինին», և երբ Գրիգորը հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ ինքը քրիստոնյա է, պարգում է նրան իր հավատի ճշմարտությունը՝ ասելով«Աստծու Միածին Որդին Լույսի լույսն է և կյանքի կյանքը, որ եկել է փոխարինելու սնոտի աստվածներին»,Տրդատը տանջանքների է ենթարկում նրան և նետում Խորվիրապի արքայական բանտը, որտեղ նա մնում է տասներեք տարի: Խորվիրապում հեծող Գրիգորին մի այրի, երագում ստացած հրամանի համաձայն, օրական մի նկանակ հաց է տալիս: Տրդատը փառավոր հաղթանակներ է տանում. նա հրամայում է ավելի սիրով պաշտել իրեն հաղթանակներ պարգևած հեթանոս աստվածներին: Սակայն կատարվում է անսպասելին. Բյուզանդիայի Դիեկղետանիոս կայսրից փախած քրիստոնյա կույսերը ապաստանում են Վաղարշապատում: Նրանց մեջ էր արքայական տոհմից սերված սքանչատեսիլ Հռիփսիմեն, ում հետ ուզում էր ամուսնանալ Դիեկղետանիոսը: Վերջինս, իմանալով կույսերի ապաստանի մասին, հրովարտակով դիմում է Տրդատին՝ պայքարելու քրիստոնյաների խաբեբա աղանդի դեմ, իսկ «խաբված չքնադագեղ կույսին իրեն ուղարկել», ապա ավելացնում է, որ եթե նրա գեղեցկությունը հաճո թվա Տրդատին, կարող է իր մոտ պահել: Տրդատը, տեսնելով Հռիփսիմեի գեղեցկությունը, ցանկանում է կնության առնել նրան և հայոց տիկնություն պարգևել: Սակայն Հռիփսիմեն, Աստծո գործությամբ ուժեղացած, հաղթում է նրան և, դաժան դատաստանի արժանանալով, նահատակվում: Հայոց արքան,

հիշելով Հոփսիսի գեղեցկությունն ու մահը, սաստիկ տրտմում է և վեցերորդ օրը որսի գնում: Նրա վրա իջնում է «Տիրոջ պատուհասը» և նա, կառքից վայր ընկնելով, սկսում է մոլեգնել ու կերպարանափոխված մտնում է եղեգնուտ՝ դառնալով խոտաճարակ: Դիվահար են լինում նաև արքայի մերձավորները և քաղաքի բոլոր մարդիկ: Աստծու կողմից տեսիլ է ուղարկվում արքայաքույր Խոսրովիդուխտին, թե այդ պատուհասը կարող է վերացնել միայն Գրիգորը: Այս պահից սկսվում է Գրիգորի վարդապետության տարածումն ու հաղթանակը, քանի որ նա իր աղոթքներով բուժում է դիվահարներին: Արքան ընդունում է Գրիգորի Աստծուն՝ հրամայելով, որ ժողովուրդը նույնպես երկրպագի նոր Աստծուն:

Գրիգորը արքային և հայ ժողովրդին մկրտում է Արածանի գետում:

Կործանվում են հեթանոսական բոլոր տաճարներն ու մեհյանները՝ իրենց տեղը զիջելով քրիստոնեական վկայարաններին ու եկեղեցիներին: Արքան քրիստոնեությունը հայտարարում է ոչ միայն ազատ կրոն, այլև 301-ին այն դառնում է պետական կրոն:

Տաճարների կործանմանը մասնակցում է նաև արքան իր զորքով. նրանք առաջինը ավերում են Տիր Աստծո տաճարը, ապա Անահիտ դիցուհու բազիլը, Վահագնի բազիլի ավերակների վրա կառուցվում է Մայր տաճարը՝ Էջմիածինը, որը նախանշում է Միածին Որդու լույսը:

Քրիստոնեությունը իր հետ բերում է նոր մտածողություն ու նոր մշակույթ. այն դառնում է նոր դարաշրջանի սկիզբ. քարոզում է մարդասիրություն, ներողամտություն, հանդուրժողականություն, սեր ու նվիրում մերձավորին: Հիմնադրվում են դպրոցներ, որտեղ ուսուցանվում են վերոնշյալ գաղափարները: Հետագայում, երբ ստեղծվեց հայոց գիրը, առաջինը թարգմանվեց Աստվածաշունչը՝ Գիրք գրոցը:

2. Անուրանալի է հայերենի առաջին ուսուցչի, Օշականի սուրբ ննջեցյալի սխրանքը, որը փրկեց հայոց աշխարհը կործանումից ու ուժացումից՝ աշխարհին պարզելով հիրավի անըստզուտ այբուբեն, որ անփոփոխ է արդեն 1600 տարի: 1600 տարի մեր գիրը փոխարինել է և՛ թագ ու թագավորության, և՛ պետականության՝ ապահովելով մեր հարատևությունը Երկիր մոլորակում: 387-ին Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև բաժանված Հայոց աշխարհը վտանգված էր, ինչպես երբեք: Անհրաժեշտ էր փրկել մեր աշխարհը, և ծնվեց Փրկիչը՝ «Ծնվեց, որ ծնվենք, Եղավ, որ լինենք, և անմահացավ, որ անմահանանք»:

Հայոց գրավոր լեզուն եկավ փոխարինելու հայոց ավարտվող պետականությանը, ամրապնդելու ազգային ինքնագիտակցությունը, ուսուցանելու մեր պատմությունն ու մշակույթը:

Մաշտոցը ծնվել է 362-ին Տարոնի գավառի Հացեկաց գյուղում՝ Վարդան Երանելու ընտանիքում: Մաշտոց անվան ենթադրելի ստուգաբանություններից է Մարդ բառը- Մարդ-մաշտ: Մաշտոց՝ մաշտ մաշտոց, որ նշանակում է գերագույն մարդ, աստվածացած մարդ: Այդպես էլ կա, քանզի Մաշտոցը աստվածային տեսիլքով նշանագրեց մեր տառերը. այս տառերը իրենց մեջ թաքցնում են յուրահատուկ քրիստոնեական խորհուրդ: Այն սկսվում է Ա- Աստված ,ընդմիջվում՝ Ս- Սուրբ հոգի և վերջանում՝ Ք- Քրիստոս տառերով: Հայոց տառերի մեջ կան շատ այլ չբացահայտված գաղտնախորհուրդ առեղծվածներ:

Կրթվելով նախ՝ Տարոնում, ապա՝ Անտիոքում, նա իր ամբողջ գիտակցական կյանքում եղել է հունադավան՝ միտված է եղել դեպի հունական մշակույթը՝ հայ ժողովրդին կրթելով ու դաստիարակելով հելլենիզմի ոգով. զարմանալի չէ, որ մեր այբուբենը դասավորված է հունական այբուբենի նմանությամբ: Հայաստան գալով՝ Մաշտոցն սկսում է իր աստվածային առաքելությունը՝ աշակերտներ վերցնելով Հայաստանի տարբեր գավառներից և դպրոցներ

բացելով Հայոց աշխարհի կենտրոնուն ու ծայրագավառներում: Սկսվում է հայրենախոս կրթության դարաշրջանը. ամեն ինչ՝ արարողությունները, կրթությունը, քարոզները, գրչությունը տարվում է հայերեն: Մաշտոցը դարձավ երկրորդ լուսավորիչ, որ հավատի հետ տարածեց ավելի անհրաժեշտը՝ մեր անմահության գրավականն ու առհավատյան: Լինելով քրիստոնեության հավատավոր քարոզիչներից՝ Մաշտոցը դարձավ մեր ժողովրդի իրական փրկիչը՝ իր աստվածստեղծ գրերով մեկընդմիջոտ որոշելով նրա անխաթար ու անխարդախ երթը:

Քանզի նա «ապացուցեց, որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում, ուր վերջանում է ամեն մի հնար»: Բորոր վերջացած հնարներից նա ձուլեց մի նոր հնար, կոչվեց հայոց լեզու, հայ ոգի, հայ հանճար՝ ինքն էլ դառնալով նույն անըստզուտ հանճարը՝ իրեն ծնող հանճարի: «Նրա կերպարը՝ իմաստավորված աստվածային գրերի հայտնությամբ, դարձավ հայ ժողովրդի երթի առաջնորդ- խորհրդանշանը, հայրենիքի փրկության միակ ապավենը»:(Դ. Գասպարյան): Հայերենի առաջին ուսուցիչը հայ ժողովրդի անփոխարինելի ու աներկրորդ առաջնորդն է:

3. Դարերի ընթացքում հայ ժողովրդի ստեղծած բազմաթիվ դյուցազներգություններից առավել մեծն ու համայնապարփակը , արտահայտիչն ու հերոսականը սքանչելի էպոսն է՝ «Սասունցի Դավիթը»: Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր», «Ջոջանց տուն», «Քաջանց տուն»:

Բոլոր վերնագրերում ժողովուրդը ստեղծել է իր պատկերացումները, լավագույն երազանքներն ու ակնկալությունները արդարացնող կերպարներ, որոնք պատկանում են չորս սերնդի և միմյանց լրացնելով կազմում են մի սքանչելի միասնություն: Էպոսի միասնությունն ընդգծվում է նաև այն ողորմիներով, որոնք փառաբանում են մնացած բոլոր հերոսներին: Էպոսը ժողովրդի գիտակցության մեջ ստեղծվել է անհիշելի ժամանակներում, քանի որ միշտ ենթարկվել է կործանարար պատերազմների, ասպատակությունների, արյունահեղ կոտորածների, ուստի և ստեղծել է կեպարներ, որոնք պատերազմ չեն հրահրում, արյուն չեն հեղում, չեն նվաճում ու ասպատակում, այլ կռվում են ի շահ և ի բարօրություն իրենց և ուրիշ ժողովուրդների: Էպոսի հերոսների կերպարները՝ տղամարդ թե կին, տարբեր լինելով իրարից իրենց բնավորությամբ, միաժամանակ ունեն շատ ընդհանրություններ՝ հայրենասիրություն, հերոսականություն, բարություն ու ներողամտություն, նվիրում ու սեր: Էպոսում մեր ժողովուրդը ստեղծել է կանանց կերպարներ՝ նրանց օժտելով գերբնական ուժով ու խելքով, հավատարմությամբ ու հայրենասիրությամբ: Առաջին կին կերպարը Ծովինարն է՝ հայոց խաչապաշտ թագավորի դուստրը, այնքան գեղեցիկ, որ.« Արևուն կասեր.«Դու դուրս մ' է՛լներ, է՛ս դուրս էլնեմ: Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ, Որ տասնուչորս ավուր լուսնին կը նմաներ, Որ յոթ սարի էտնեն կ' էլնի»: Հայրենասեր արքայադուստրը կամովին կնության է գնում կռապաշտ խալիֆին, որպեսզի փրկի իր ժողովրդին, իր հայրենիքը:

Կնոջ երկրորդ կերպարը Դեղձորն- Ծամն է. կախարդուհի, որ, մոռանով իր աղջկական արժանապատվության մասն, նամակով կախարդեց Սանասարին՝ դառնալով Սասնա Տան տիրուհի,սիրող ամուսին, կովի գնացող թռռանը բարի ճանապարհ մաղթող զառամյալ տատիկ: Սպիտակ ամբոցի դեռափթիթ տիրուհուն ժողովուրդը այսպես է բնութագրում.

Ես Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն եմ:

Իմ սի՛րտ քանց էսա լիք կուժ սար- սուրբ է. իմ գլո՛ւլի՝ քանց էսա լիք կուժ լափ-լիքն է:

Աստրծու շնորհքով լցուկ եմ:

Հետո հանդիպում ենք Սպիտակ դևի կողմից առևանգված Արմադանին, որին ազատում է Միերը՝ ամուսնանալով նրա հետ : Այս հերոսուհու նկարագիրը ժլատ է՝ « Էն այրի դուռ, ծառին կապած հուրի- հրեղեն աղջիկ մի:

Էն հուրի Արմադան բերին պսակեցին վեր Միերին», բայց նրա հավատարմությունն ու ներողամտությունը նրան առանձնացնում են մյուսներից. հանուն Մասնա օջախի ճրագի՝ նա «երթմնակոտոր» է լինում և ներում Մեծ Միերին, ու ծնվում է մեր ժողովրդի ազատարարը, նրա ամենասիրելի հերոսը՝ Դավիթը:

Իր պապի՝ Սանասարի նման Դավիթն էլ սիրահարվում է գուսանների երգած գեղեցկուհուն. Խանդութն էլ Դեղձուն Ծամի նման լսել է Դավթի մասին և ուզում է տիրել նրան՝ միակ իրեն արժանիին: «Տ՛ ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.

Էնոր բոյ գյուլու էղեզ նման է, էնոր սրտիկ Քուռկիկ Չալալու մեյդանն է, էնոր բերան մեղրով բացած է, էնոր ատամներ մարգրրիտ շարած է, էնոր աչքեր գինու կթղա է, էնոր ձեռ-ոտ կալամով քաշած է, էնոր էղնգներ ռանդայով տաշած է, էնոր ծամեր քառսուն ճուղ ծամ է, էնոր բոյ- բուսաթ շատ նման է քաղքի բրջին, էրեսի կարմրություն՝ նոսն գինի է, էնոր ծրծեր մեջ ծոցին, քանց Հալապա շաքար քաղցր է, ընդրա բոյ՝ քառսուն գազ է, ընդրա աչքի թարթափներ կոնկի թևի նման է...»: Բազում փորձություններ հաղթահարելով Դավիթն ամուսնանում է Խանդութի՝ իմաստուն , նվիրյալ և հերոսական կնոջ հետ: Բայց, ինչպես հայրը, Դավիթն էլ, սիրո մի մեղանչման պատճառով, պատժվում է մահով: Միբեցյալ կինը առանց ամուսնու ապրել չի կառո և իրեն նետում է աշտարակից:

Նրանց որդին՝ Փոքր Միերը, ամուսնանում է Պաճիկ թագավորի չքնաղ դստեր՝ Գոհարի հետ, քանի որ այդպես էին պայմանավորվել Դավիթն ու Պաճիկ թագավորը: «Միեր աչքեց Գոհարի էրես, Գոհար էնպես խորոտ էր»: Չափազանց գեղեցիկ է Գոհարի սրտացավությունը Միերի նկատմամբ, երբ արևից պաշտպանելու համար մենամարտում է նրա հետ, համոզվում, որ անպարտելի է, ապա գորովանքով ուտելիք է ուղարկում սիրեցյալին: Նա հավատարիմ է մնում Մասնա բոլոր քաջագուն հարսների ուխտին՝ ցանկանալով թաղվել Խանդութը մոտ: Էպոսում կա նաև ժողովրդի իմաստությունը մարմնավորող Արտատեր Պառավը, ով Դավթի խորհրդատուն է ու « կը գաս դու ինձի մե՛ր ըլնես, ես մեր չ՛ ունեմ:- ես էլի քեզ մեր եմ». ահա այսպիսի սիրով ու երախտագիտությամբ է Պառավը հատուցում իր երբեմնի սիրո համար: Կա Իսմիլ խաթունը, ում հնարամտությունն ու հայրենասիրությունը նույնպես գովերգում է ժողովուրդը չնայած թշնամու մայր լինելուն. « Իսմիլ խաթուն ջահել ու խորոտիկ կին մ՛ էր»: Կան Չմշկիկ Սուլթանն ու իր աղջիկը. միակները, ովքեր չար են, վրիժառու: Սակայն սրանց նույնպես չի թերագնահատում ժողովուրդը. « Չմշկիկն էլ շատ խորոտ փահլևան էր:

Մեկ չինի աչքերով աղջիկ՝ Չմշկիկ Սուլթանի և Դավթի աղջիկը»:

Մառյեն՝ օտար զարմից այդ կինը չի արժանանում ժողովրդի ու հերոսների սիրուն: Նա խորթ է Մասնա տանը, հեռու է մարդասիրությունից: Մեկ անգամ հիշատակվում է Քեռի Թորոսի կնոջ՝ Մանդուխտի անունը, որը ոչ մի դեր չունի թպոսում: Էպոսի չորս ճյուղերի հերոսների կանայք նույնպես անհաղթելի են, սիրառատ, հայրենասեր, Մասնա տան պահապան Ոգիներ. Հիշենք զօղորմին Ծովինարին, քառսուն օղորմի Դեղձուն Ծամին, քառսուն օղորմի Արմադանին, քառսուն օղորմի Խանդութ խանումին, քառսուն օղորմի Գոհար խանումին, քառսուն օղորմի Արտատեր Պառվուն:

Հայաստան կոչվող լեռնաշխարհում ի սկզբանե ապրում էր մի խաղաղասեր ժողովուրդ, որ հողագործ էր, ռազմիկ, փիլիսոփա ու բանաստեղծ, որ բանաստեղծեց իր պատմությունը՝ հիասքանչ մեր դյուցազներգությունը:

4. Առակի հեղինակը միջնադարյան առակագիր, ճարտասան, փիլիսոփա, «Առակավոր ճառի» հիմնադիր Վարդան Այգեկցին է, որն Այգեկցի է կոչվել հոչակավոր Այգեկ վանքում ապրել և գործելու համար: Նա ծնվել է Տլուք գավառի Մարաթա գյուղում և երբեմն կոչվել է նաև Վարդա Մարաթացի Մասնակցել է Կիլիկիայի արքա Լևոն Բ Մեծի թագադրմանը: Գրել է բազմաթիվ ճառեր, թղթեր, խրատներ, առակներ, կազմել է «Արմատ հավատո» ժողովածուն: Առակը այլաբանական իմաստով բարոյախրատական փոքրածավալ ստեղծագործություն է՝ անգնահատելի դաստիարակչական նշանակությամբ: Հիմնական միտքը արտահայտվում է այլաբանորեն՝ կենդանիների, թռչունների, երկնային մարմինների (երբեմն էլ մարդկանց) վերագրելով մարդկային արատավոր թերություններ: Իրականում առակի հերոսը ևս միշտ մարդն է: Ներկայացնելով կենդանիների «բնավորություններն» ու «հարաբերությունները» հեղինակն ակնարկում է համապատասխան մարդկային հատկություններ: Ներկայացված առակը՝ «Գարու հաշիվը», Վարդան Այգեկցու տարածված առակներից է, որտեղ ծաղկվում է անաշխատ եկամուտով սնվող մարդը, որը հետագայում անպայման վճարելու է իր ստացածի համար: Գիրացվող խոզը մորթվում է այն ժամանակ, երբ արդեն կարելի էր առավելագույնս հետ ստանալ նրան տրված «բարիքը»: Աշխատասեր մարդը՝ ավանակը, իր որդուն նախագուշացնում է գալիքի մասին՝ դաստիարակելով ազնիվ աշխատանքով ապրելու գաղափարով: Առակի առաջին մասը նկարագրում է դեպքերի հաջորդական ընթացքը, որը կոչվում է սյուժե, իսկ երկրորդ մասը բարոյախոսությունն է՝ յուրաքանչյուրին՝ ըստ վաստակի: Խրատական բովանդակությունը ներկայացվում է հուզական պատմությամբ՝ վախեցած քուռակի՝ ոտքի տակ պատահմամբ գարի լինելու փաստով: Խրախուսվում է արդար վաստակի գաղափարը: Առակները ծառայում են կյանքի բացասական երևույթների մերկացմանը և արժանապատիվ ու առաքինի ապրելու անհրաժեշտությանը: Անաշխատ վաստակով գիրացած խոզը պարտվում է, իսկ արդար աշխատանքով ապրող մայրն ու քուռակը՝ հաղթում:

Գնահատման չափանիշները /10-րդ դասարան/

1-ին հարց

- 1 ենթահարց՝ 3 մ.
- 2 ենթահարց՝ 2 մ.

2-րդ հարց

- 1 ենթահարց՝ 2,5 մ.
- 2 ենթահարց՝ 2,5 մ.

3-րդ հարց

- 1 ենթահարց՝ 2 մ.
- 2 ենթահարց՝ 1 մ.
- 3 ենթահարց՝ 2 մ.

4-րդ հարց

- 1 ենթահարց՝ 2 մ.
- 2 ենթահարց՝ 3 մ.